Հիմա ի՞նչ կասէք, կորուստներ ինձնից շատ առաջ։

Դուք մի նորեկ՝ սեպտեմբերին ձեր ընդհանուր հաշուետուութեան մէջ մեայլ գոյներով ներկայացրել էք և մատենադարանը, իսկ ստուգումը և այն էլ «ոչ լրիւ» կատարել էք տարուայ վերջը, որի արդիւնքը ուրեմն տարուայ սկզբին դուշակել էիք. թէ ոչ ի՞նչպէս լուծենք այս հանելուկը։

Եթէ դուք ձեր ձեռքի տակ եղած տեսչական գործերից, մատենադարանի ցուցակներից և վաւերաթղթերից բարեխղճութեամբ օգտուէիք ձեր հաշիւը կազմելիս, կիմանայիք և կը գրէիք ճշմարտութիւնը։ Իսկ եթէ դուք կը շարունակէք ձեր յիշողութեան յենուելով՝ և վաւերաթղթերը ծածկելով՝ ընթերցողներին մոլորեցնել, այդ ձեր բանն է։ Միայն թէ դուք պէտք է չմոռանաք, թէ ես ինչ պայմաններում և պայմաններով եմ ստացել մատենադարանը, իսկ որ գլխաւորն է, դուք պէտք է լաւ իմանաք, որ ես մի միայն իմ պարտքերի համար եմ պատասխանատու։

Մատենադարանապետ և ուսուցիչ Ս. Է. Գ. Հ. ՃԵՄԱՐԱՆԻ

Սեփուհ Կանայեանց.

5-ն Օգոստոսի 1910.

Վաղարշապատ.

Մոսկուայի Լազարեան ճեմարանի վարչութիւնը տարեւոյս յուլիսի 21-ի № 1765 գրութեան հետ ուղարկել է հանգուցեալ Սարգիս Արքեպիսկոպոս Հասան Ջալալեանցի կտակած դրամագլխի հաշիւը հետեւեալ կերպով.

ՀԱՇԻՒ

Սարգիս Հասան Ջալալեանցի դրամագլխի 1909 թուի համար

ՄՈՒՏՔ

	% թղթ. ռուբ.	կանխ. դրամ կոպ.	ռուբ.	կոպ.
Մնացել է առ 1-ն յունուարի 1909 թ. . . .		111,246–99	3,243–92	
1909 թուի ընթացքում				

ստացուել է . . .	8,450–54	4,704–89

ԵԼՔ

Վճարուած է ձեռք բերած %թղթերի համար 7721 ռուբլի 02 կոպ. և 1908 թուի դրամագլխի հաշիւը տպագրելու համար 35 ռուբլի 70 կոպէկ		
Ընդամենը . .	—	— 7,756–72
Առ 1 յունուարի 1910 թ. կայ պատրաստ . .	119,697–53	192–09

Ծանօթութիւն.—Դրամագլուխը գանուում է Մոսկուայի նահանգական գանձարանում և պէտք է աճի 1883 թուից 125 տարուայ ընթացքում՝ մինչև գումարը հասնի 12 միլիոն ռուբլու. իսկ յետոյ կը գործադրուի ուսումն. հիմնարկութիւնների հաստատութեան և կտակարարի անուանով որդեգիրների համար։



ԵՂԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՍԱՆ-ԶԱԼԱԼԵԱՆ ԵՎ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ

Միաբան ս. Էջմիածնի Եղիա վարդապետ Հասան Զալալեան 75 տարեկան, օգոստոսի 23-ի գիշերը յանկարծամահ, առանց տանջանքների վախճանուեց արդարի մահով, և 25-ին կատարուեց յուղարկաւորութիւնը պատշաճ հանդիսաւորութեամբ. և բոլորը, մատուցանելով արժանաւոր յարգանքը արժանաւոր կրօնաւորին, մտածում էին, որ Եղիա Հայրս-սուրբին փոխարինող էլ չկայ։